ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» «08» **2025թ.** N ՄՈ/775-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N2060-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սոցիալապես անապահով քաղաքացիների կողմից ուղղված դիմումները և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 23-ի ՄՈ/60-2021 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 190,000 /մեկ հարյուր իննսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար, որպես քաղաքացիներին միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա.Հովհաննիսյանին՝ տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-08-07 14:22:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Բ.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 060 901010, էլ. փոստ armavir.gartughar@mta.gov.am